



Վեհափառ Տեր, Վիրահայոց թեմը, իբրև սիրո և հարգանքի տուրք, հոգևոր Հայրապետի վաստակաշատ Ձեր հոբելյաններին է նվիրել Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայում, դեկտեմբերի 25-ին կայանալիք դասական երաժշտության համերգը:

Մենք աղոթում ենք Ձեր արկաշատության, վրաց և հայ եկեղեցիների անսասան բարեկամության համար և մաղթում քաջառողջություն, արկաշատ տարիներ: Աղոթում ենք մեր եկեղեցիների եղբայրության համար, ու թող Ձեր օրհնությունը միշտ ապավեն լինի ինչպես վրաց ժողովրդի, այնպես էլ Վրաստանում ապրող հայ համայնքի համար:

Որդիական խոնարհությամբ՝ Մատչիմ ի համբոյր Ձերդ Օծեալ Սուրբ Աջոյն:

ՏԵՐ ՎԱՋԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՋԱՆԱՆՅԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ